2 մայիսի 2013 թվականի N 454 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N 2246-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Թեղուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 2246-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 2-րդ կետում՝

ա. «164.97» թիվը փոխարինել «165.27» թվով,

բ. «47.3» թիվը փոխարինել «47.6» թվով.

2) որոշման 3-րդ կետում՝

ա. «ա» ենթակետում «164.97 հեկտար հողերից 16.14 հեկտարը» բառերը փոխարինել «165.27 հեկտար հողերից 16.44 հեկտարը» բառերով,

բ. «բ» ենթակետում «5.77» թիվը փոխարինել «5.47» թվով.

3) որոշման N 6 հավելվածում՝

ա. 018-002 տողից առաջ հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

014-006-01	0.3								մանկապարտեզ

»,

բ. «ընդամենը» տողի 2-րդ սյունակում «47.30» թիվը փոխարինել «47.60» թվով.

4) որոշման N 7 հավելվածում՝

ա. «բնակավայրերի» սյունակի «014-006» ծածկագրով տողում «0.60» թիվը փոխարինել «0.30» թվով,

բ. «բնակավայրերի» սյունակի «ընդամենը» տողում «1.45» թիվը փոխարինել «1.15» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ